# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## ՈՐՈՇՈՒՄ

17 դեկտեմբերի 2012թվականի N 21-Ն

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

Բաղրամյան համայնքի 2012թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. ՊԱԿԱՍԵՑՆԵԼ՝ Վարչական բյուջեի Կառավարման մարմնի պահպանումից /01.01.01.51/ ծրագրի 4131 հոդվածից 94,5 հազ, դրամ; 4234 հոդվածից 25,5 հազ.դրամ; ընդամենը 120,0 հազար դրամ:
2. ԱՎԵԼԱՑՆԵԼ՝ Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրի 4111 հոդվածին 120,0 հազար դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ
2. ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/093/072898

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2012թվականի N 22-Ն

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով ՝ Բաղրամյան համայնքի ավագանին որոշեց՝

**Բաղրամյան համայնքի վարչական տարածքում 2013թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝

*հիմնական կառույցների համար՝*

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության կառույցների համար՝ 7500 դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված կառույցների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 15000 դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 25000 դրամ.

գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող կառույցների համար՝ 35000 դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2012թվականի N 23-Ն

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ն մասի 20-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, ընդառաջելով Նորիկ Միքաելյանի խնդրանքին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բաղրամյանի սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքով Նորիկ Միքաելյանին պատկանող Արտաշատյան խճուղի 4/1 հասցեում երկհարկանի առնտրի սրահին կից 0,00531 հա հողատարածքը հնարավոր չէ օտարել որպես ոչ առանձին գույքային միավոր

1. Թույլատրել համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արտաշատյան Խճուղի 4/1 հասցեում գտնվող Նորիկ Միքաելյանին պատկանող շինությանը կից 0,00531 հա հողատարածքը ուղղակի վաճառքի կարգով օտարելու Նորիկ Միքաելյանին:
2. Հողատարածքի ուղղակի վաճառքի կարգով օտարման գները հաշվարկել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ
2. ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2012թվականի N 24

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական Ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով

Հաստատել Բաղրամյան համայնքի 2013-2016թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԴԱԼՅԱՆ ՄԱՌԼԵՆ
2. ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

*04200805*